ՀՏԴ -636.2 Տավարաբուծություն

ՍԻՄԵՆԹԱԼ և ՋԵՐՍԵՅ ՑԵՂԵՐԻ ՀՈՐԹԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Մեյրան ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ, Լյովա ԱՍՐՅԱՆ

Բանալի բառեր- *ցեղ, մթերատվություն, լակտացիա, արդյունաբերական տեխնոլոգիա, կաթնային գործակից, ժառանգականություն, զիգոտա, վերարտադրական ընդունակություն*

Ключевые слова *- порода, продуктивность, лактация,промышленная технология ,коэффициент молочности, наследственность, зигота, воспроизводительная способность.*

Key words *- breed. production. laktation, industrial technology, coefficient of milk, heredity, zygote, the abiity of reproduction*

С. Шахназарян, Л.Асрян

СРАВНИТЕЛЬНАЯ ОЦЕНКА ТЕЛОК ДЖЕРСЕЙСКОЙ И СИММЕНТАЛЬСКОЙ ПОРОД В УСЛОВИЯХ НАГОРНО- КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКИ

В сравнительном аспекте изучены рост, развитие молодняка указанных пород полученного в новых природноклиматических условиях, по возростным периодам,от рождения до оплодотворного осеменения. Во все возрастные периоды телки семментальской породы по интенсивности роста превосходили джерсейской на 18.8 – 44.%.

Животные джерсейской породы, достигли физиологической и хозяственной зрелости в возрасте 20,5 месяцев против 21 месяца у симменталов, при живом весе соответственно - на 320 и 455 кг.

По молочной продуктивности и жирности молока в первых двух лактациях, коровы привозных пород также характеризовались близкими показателями в соответствии с их стандартами первого класса.

По качеству молочного жира животные джерсейской породы превосходили симменталов на 40 %-ов .

Не исключено, что при благоприятных условиях кормления и содержания, ,животные обеих пород могут проявить более высокую продуктивность , обусловленной наследственностью.

S. Shahnazaryan L. Asryan

THE COMPARATIVE EVALUATION OF THE JERSEY AND THE SIMMENTAL CATTLE BREEDS IN THE CONDITIONS OF THE NKR

The growth and development of the offsprings of the pointed breeds which were created in the new natural climatic conditions were studied in comparative aspects due to age periods ;from birth to the impregnation with the semen .In all age periods the Simmental breeds cattle surpassed the Jersey breeds due to the intensiviti of growth by 18,8 % - 44 %.

The Jersey breeds cattle reached physiological maturity at the age of 20,5 months compared with the 21 months of the Simmental breeds,with live bodyweight of 320 kg and 455 kg accordingly.

Due to the milk productivity and milk butterfat of the first two lactations the cattle of the imported breeds were also characterized by close indicators in accordance with the stendards..

Հանրագումարի բերելով կատարված հետազոտությունների արդյունքները, ,կարելի է հանգել այն եզրակացության , որ եվրոպական ծագում ունեցող ներկրված ջերսեյան և սիմենթալ ցեղերի անասունները կլիմայավարժեցման առումով , դեռևս գտնվում են կայացման փուլում, դրսևորելով աճի , զարգացման և մթերատվության ձևավորման առումով նշված ցեղերի համար սահմանված ստանդարտներին մոտ ցուցանիշներ:

Միաժամանակ չի բացառվում, որ լիարժեք կերակրման և խնամքի նորմալ պայմաններում, նրանք ցուցաբերեն ավելի բարձր մթերատվություն, պայմանավորված ժառանգականությամբ:

Մթերատվությունը և մյուս տնտեսակենսաբանական հատկությունները գյուղատնտեսական կենդանիների մոտ ձևավորվում են ժառանգականության և կերակրման ու խնամքի պայմանների հիման վրա, նրանց անհատական զարգացման պրոցեսում: Անհատական զարգացումը ընդգրկում է բոլոր փոփոխությունները, որոնք տեղի են ունենում օրգանիզմում՝ սկսած զիգոտայի առաջացումից , մինչև կենդանու կյանքի վերջը:

Անասնաբուծությունը համարվում է գյուղատնտեսության գլխավոր ճյուղերից մեկը, որի տեսակարար կշիռը 2014 թ. հանրապետության ազգային վիճակագրական վարչության տվյալներով, գյուղատնտեսության համախառն արտադրանքում կազմել է 51,8 % (2): Անասնաբուծության առաջատար ճյուղը համարվում է տավարաբուծությունը, որին բաժին է

ընկնում հանրապետության ամբողջ կաթի արտադրությունը և մսի արտադրության շուրջ 40 %-ը:

Հանրապետությունում որպես պլանային է համարվում կովկասյան գորշ ցեղը, որին բաժին է ընկնում տավարի ընդհանուր գլխաքանակի 97 %-ը: 2014թ. տվյալներով մեկ կովի միջին տարեկան կաթնատվությունը կազմել է 1940 կգ: Անշուշտ , մթերատվության նշված մակարդակը չի կարող բավարարել ժողովրդական տնտեսության հարաճուն պահանջները , ուստի պետք է նոր ուղիներ փնտրել՝ ուղղված անասնաբուծության մթերատվության բարձրացմանը, որոնցից առավել կարևոր նշանակու թյուն ունի ցեղի ճիշտ ընտրությունը:

Ավանդական հատկանիշները ,որոնցով գնահատվում են ցեղերը համարվում են կաթնատվությունը, մսատվությունը,վերարտադրական ընդունակությունը, ինչպես նաև պիտանիությունը արդյունաբերական տեխնոլոգիայի պայմաններին:

Անասնաբուծության ինտենսիվացման հետ կապված ցեղերի նկատմամբ

պահանջները բարձրանում են որպես արտադրության միջոցի: Այս առումով գիտական ուսումնասիրությունների օբյեկտ են ծառայել 2011թ. Դանիայից ներկրված և հանրապետության Ասկերանի շրջանի Նորագյուղի ՍՊԸ »Արմ-Ագրո«-ի տոհմային ֆերմայում տեղակայված սիմենթալ և ջերսեյ ցեղերի երինջները: Ուսումնասիրվել են նոր բնակլիմայական պայմաններում նրանց կլիմայավարժեցման նախնական արդյունքները, կաթնային մթերատվության ցուցանիշները առաջին և երկրորդ լակտացիաներում, ինչպես նաև տեղում ստացված սերնդի աճի, զարգացման դինամիկան, սկսած ծնված օրից մինչև առաջին բեղմնավորման հասակը: Ընդհանուր առմամբ ներ են մուծվել 190 գլուխ երինջներ, այդ թվում 100 գլուխ ջերսեյ և 90՝ սիմենթալ ցեղերի:

Եթե հաշվի չառնենք, որ սիմենթալ ցեղի սահմանափակ թվով արտադրողներ նախկինում օգտագործվել են մարզի »թուրշսու« տոհմային տնտեսությունում և լայն տարածում չեն ստացել, ապա ներկրված խումբը, մաքրացեղ երինջների առումով, կարելի է համարել առաջինը: Այս ցեղը պատկանում է խոշոր ցեղերի շարքին և ունի կաթնամսային ուղղություն : Հորթերի կենդանի զանգվածը ծնված ժամանակ կազմում է 36-45 կգ, կովերինը՝ 550-650 կգ, ցուլերինը՝ 900-1100 կգ (1): Ցեղի ստանդարտը ըստ կաթնային մթերատվության , կազմում է 1-ին լակտացիայում 2700 կգ, 3-րդ և բարձր լակտացիաներում՝ 3500 կգ, յուղայնությունը՝ 3,8 % (3) :

Իսկ ջերսեյ ցեղի ուղղությամբ երինջների առաջին խումբը 100 գլխի հաշվով ձեռք է բերվել 2009 թ. ԼՂՀ Գյուղնախարարության կողմից և կենտրոնացվել Ասկերանի շրջանի »Խնապատի« տոհմակայան ՓԲԸ-ում : Այն ունի անգլիական ծագում, համարվում է զուտ կաթնային ուղղության ցեղ, բնութագրվում է աշխարհի մասշտաբով կաթի բարձր յուղայնությամբ օժտված ցեղ: Հորթերի կենդանի զանգվածը ծնված ժամանակ կազմել է 18-22 կգ, հասուն կովերինը՝ 360-400 կգ, ցուլերինը 600-700 կգ (1): Կաթնային մթերատվության առաջին դասի ստանդարտը կազմում է 3000-ից - 3600 կգ, յուղայնությունը՝ 5% (3): Հաշվի առնելով, որ նշված ցեղերի ներկրումը ԼՂ հանրապետություն կատարվել է վերջին տարիների ընթացքում (2009-2011թթ.), նրանց տնտեսակենսաբանական առանձնահատկությունների և կլիմայավարժեցման ընդունակությունների ուսումնասիրությունը նոր բնակլիմայական պայմաններում, ունի որոշակի տեսական և պրակտիկ նշանակություն:

Ներկրված երինջների ծինը երկու ցեղերի մոտ հիմնականում կատարվել է 2012թ. փետրվար-մարտ ամիսներին:

Համանմանության սկզբունքով երկու ցեղերի հաշվով ընտրվել են 15-ական գլուխ էգ հորթեր և 12-ական գլուխ առաջնածին կովեր:Հորթերի առումով ուսումնասիրվել են նրանց աճի, զարգացման դինամիկան սկսած ծննդյան օրից և շարունակվել մինչև առաջին բեղմնավորման հասակը, տնտեսությունում ընդունված կերակրման ու պահվածքի պայմաններում, որոնց արդյունքները զետեղված են թիվ 1 և 2 աղյուսակներում:

Աճի ինտենսիվությունը փորձնական կենդանիների մոտ ուսումնասիրվել են համաձայն հետևյալ բանաձևի՝ $D = \frac{W1-W2}{t2-t1}$

Կաթի յուղայնությունը որոշվել է թթվային մեթոդով, ըստ Գերբերի:

Աղյուսակ 1

Մատղաշների կենդանի զանգվածի դինամիկան

Ցեղը	Կենդանիների թիվը (գլուխ)	կենդանի զանգվածը ծնված ժամանակ (կգ)	հասակը (ամիս)			կենդանի զանգվածը բեղմնավորման ժամանակ (կգ)
			6	12	18	
Ջերսեյան	15	18	122	136	285	320
Սիմենթալ	15	38	175	276	405	455

Աղյուսակ 2

Մատղաշի աճի ինտենսիվության դինամիկան ըստ հասակային շրջանների

Ցեղը	հասակը (ամիս)		
	0-6	6-12	12-18
Ջերսեյան	577,8	411,1	494,4
Սիմենթալ	761,1	561,1	716,6

Ինչպես ցույց են տալիս թիվ 1 և 2 աղյուսակների տվյալները մատղաշների մոտ ավելի բարձր միջին օրական քաշաճեր՝ երկու ցեղերի հաշվով արձանագրվել են 0-ից 6 ամսական հասակում, կազմելով ջերսեյան ցեղի մոտ՝ 577,8 գրամ,իսկ սիմենթալի՝ 761,1 գրամ: Համեմատաբար ավելի ցածր ինտենսիվության աճ նկատվել է 6-ից 12 ամսական հասակում և կազմել է համապատասխանաբար՝ 411,1 և 561,1 գրամ: Վերջինս ամենայն հավանականությամբ պայմանավորված է նրանով, որ նշված հասակում կերաբաժնից հանվել են կաթնային կերերը, իսկ մարսողական օրգանները, հատկապես նախաստամոքսները , պատշաճ մակարդակով զարգացած չեն եղել_ ընդունելու և բարձր աստիճանի մարսելու մեծ քանակի կոպիտ և հյութալի կերեր: Հետագա հասակային շրջաններում այդ բացը համեմատաբար լրացվել է և կազմել 12-18 ամսում 494 և 717 գրամ: Համեմատաբար ջերսեյան ցեղի մատղաշները ավելի վաղահաս են եղել:Առաջին բեղմնավորման հասակը նրանց մոտ կազմել է 615 օր, իսկ սիմենթալի մոտ՝ 630 օր: Միջին օրական քաշաճը 18 ամսից մինչև բեղմնավորման հասակը համապատասխանաբար կազմել է 467 և 555 գրամ: Ընդհանուր առմամբ բոլոր հասակային շրջաններում սիմենթալ ցեղի մատղաշները աճի ինտենսիվությամբ գերազանցել են ջերսեյան ցեղին, տատանումները կազմելով 18,8% -ից – 44,9% : Եվ դա բնական կարելի է համարել, քանի որ սիմենթալ ցեղն ունի կաթնամսային ուղղություն, նրա մոտ հաջող են համակցվում կաթնային և մսային մթերատվությունը :

Նշված ուսումնասիրություններին զուգահեռ կատարվել են հետազոտություններ ներկրված երինջների կաթնային մթերատվության ուղղությամբ առաջին և երկրորդ լակտացիաներում, որոնց արդյունքները զետեղված են թիվ 3 աղյուսակում:

Աղյուսակ 3

Ջերսեյան և սիմենթալ ցեղերի կաթնային մթերատվությունը.

Ցեղը	կենդանիների թիվը (գլուխ)	I լակտացիա			II լակտացիա			կենդանի զանգվածը (կգ)		կաթնայի ն գործակից (կգ)	
		ընդ հանուր մեծությունը (կգ)	ընդհանրացված (%) մեծի վերջի	միջին մեծությունը (կգ)	ընդ հանուր մեծությունը (կգ)	ընդհանրացված (%) մեծի վերջի	միջին մեծությունը (կգ)	I օրվ	II օրվ	I օրվ	II օրվ

Ջերսեյ ան	12	300 0	5,5	165	325 0	5,3	172 ,2	3 60	3 80	8 33	8 55
Սիմեն թալ	12	280 0	4,2	117 ,6	300 0	4,1	123	5 00	5 50	5 60	5 36

Առաջին երկու լակտացիաների արդյունքներով կաթնատվությունը երկու ցեղերի մոտ բնութագրվել է նրանց նկատմամբ սահմանված ստանդարտներին մոտ ցուցանիշներով: Կաթնայուղի ընդհանուր քանակի առումով ջերսեյան ցեղի կովերը առաջին և երկրորդ լակտացիաների արդյունքներով գերազանցել են սիմենթալին՝ համապատասխանաբար 40,3 և 40 %-ով: Իսկ կաթնային գործակցի առումով , 100 կգ կենդանի զանգվածի հաշվով գերսեյան ցեղի կովերը առաջին ծնում տվել են 833 կգ կաթ, երկրորդում՝ 855 կգ : Սիմենթալ ցեղի մոտ այդ ցուցանիշը համապատասխանաբար կազմել է 560 և 536 կգ :

Ներկրված ցեղերի մոտ որոշակի տարբերություններ են նկատվել կապված նոր բնակլիմայական պայմաններում հարմարվածության հետ:

Սիմենթալ ցեղի կենդանիները բնութագրվել են հանգիստ բնավորությամբ, մեքենայական կթին շուտ ընտելացմամբ: Բացասական կողմն այն է, որ ունենալով մեծ կենդանի զանգված,դժվարանում են քայլել, արդյունքում ստանում են վերքեր,տեղիք տալով կաղության և թարախային պրոցեսների, որոնք և ուշ են ապաքինվում: Այս ցեղի անասունները շատ զգայուն են պիրոպլազմոզ հիվանդության նկատմամբ: Հիվանդության նշանները թույլ են արտահայտվում, տեղիք տալով պրոցեսի խորացման և ծանր հետևանքների:

Ջերսեյան ցեղի անասունները բնութագրվում են չար բնավորությամբ, դժվար են հարմարվում մեքենայական կթին:

Արոտավայրերի բացակայության պատճառով, տնտեսությունում կիրառվում է մսուրային պահվածք, կերաբաժնի կառուցվածքում ընդգրկելով հիմնականում տեղում արտադրված կերեր, որոնք որակական առումով նորմալ մակարդակի վրա չեն գտնվում:

Գրականություն

1.Սարգսյան Ռ. Թ. և ուրիշներ «Տավարաբուծություն», Երևան 2012 թ.
2. ԼՂՀ վիճակագրության տարեգիրք .2014 թ.
3. Հրահանգ »Կաթնատու և կաթնամսատու տավարի բոնիտավորման «. Երևան 2010 թ.

Տեղեկություններ հեղինակի մասին.
Սեյրան Շահնազարյան- գ.գ.թ., Անասնաբուծական բժշկություն և անասնաբուծության ամբիոն, ՀԱԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղ
Լյովա Ասրյան - Անասնաբուծական բժշկություն և անասնաբուծության ամբիոնի դասախոս, ՀԱԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղ
E – mail: davka-88@.mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, կ.գ.դ., Վ.Տ.Հայրապետյանը: